



Կալիֆորնիայի Պաշտպանության և Փաստաբանության համակարգ
Անվճար հեռախոսահամար (800) 776-5746

Ձեր գործատուի կողմից աջակցող տեխնոլոգիայի ձեռքբերումը

Հոկտեմբեր 2015, Հրատ.՝ #5580.10 - Armenian

1. Ի՞նչ է աջակցող տեխնոլոգիան:

«Աջակցող տեխնոլոգիան» (“assistive technology”) այն տեխնոլոգիան է, որն օգտագործվում է աջակցող տեխնոլոգիայի սարքում կամ աջակցող տեխնոլոգիայի ծառայությունում՝ ավելացնելու, պահպանելու կամ բարելավելու հաշմանդամ անձանց ֆունկցիոնալ կարողությունները: 29 ԱՄՆ օրենսգիրք (U.S.C., United States Code) Հոդված 3002(3)(4)(5)

2. Ո՞ր օրենքներն են ինձ հնարավորություն ընձեռում՝ իմ գործատուից աջակցող տեխնոլոգիա խնդրելու համար:

Կան մի շարք օրենքներ, որոնց համաձայն գործատուներից պահանջվում է բավարարել և որպես պատշաճ հարմարություն աջակցող տեխնոլոգիա տրամադրել, ներառյալ Հաշմանդամ ամերիկացիների մասին օրենքը (ADA, Americans with Disabilities Act) Վերականգնման մասին օրենքի 504 հոդվածը (Rehabilitation Act) և Կալիֆորնիայի օրենքները (California Laws):

Հաշմանդամ ամերիկացիների մասին օրենքի և հաշմանդամ մարդկանց իրենց գործատեղ ինե՛րում պաշտպանող այլ օրենքների վերաբերյալ հավելյալ տեղեկությունների համար տե՛ս Disability Rights California-ի «Աշխատանքային իրավունքները՝ համաձայն հաշմանդամ

ամերիկացիների մասին օրենքի» (Employment Rights under the Americans with Disabilities Act) հրապարակումը, որը մատչելի է՝ <http://www.disabilityrightsca.org/pubs/PublicationsEmployment.htm>:

3. Ես ADA-ի համաձայն հաշմանդամ եմ ճանաչվել: Ես աջակցող տեխնոլոգիայի կարիք ունեմ՝ իմ աշխատանքը կատարելու համար: Կարո՞ղ եմ գործատուիս խնդրել տրամադրել այն:

Այո: ADA-ի համաձայն ուղիներից մեկը, որով Ձեր գործատուն կարող է պատշաճ հարմարություններ տրամադրել՝ Ձեզ նոր սարքավորում տրամադրելը կամ գոյություն ունեցող գրասենյակային սարքավորման փոփոխությունը կամ աջակցող տեխնոլոգիայի տրամադրումն է՝ Ձեր աշխատանքի կարևոր գործառույթները (հիմնական պարտականությունները) կատարելու համար: 29 կանոնակարգերի օրենսգիրք (C.F.R., Code of Federal Regulations) § 1630.2(o)(2)(ii): Մյուս կողմից, այն առաջադրանքների դեպքում, որոնք աշխատանքի համար կարևոր չեն (ոչ կարևոր գործառույթներ), Դուք չեք պահանջի, որ Ձեր գործատուն Ձեզ պատշաճ հարմարություններ տրամադրի: 29 C.F.R. 1630(n)(1): Ձեր խնդրանքը չպետք է անհարկի դժվարություններ ստեղծի գործատուի համար: 29 C.F.R. §§ 1630.2(p), 1630.15(d):

4. Ե՞րբ կարող եմ աջակցող սարք խնդրել:

Աջակցող տեխնոլոգիայի Ձեր իրավունքը մատչելի է աշխատանքի բոլոր փուլերում, ներառյալ ընդունման դիմումի և աշխատանքի ընթացքում: 29 C.F.R. § 1630.2(o)(1):

5. Ի՞նչ տեսակ աջակցող տեխնոլոգիա կարող եմ խնդրել:

ADA-ն չի սահմանափակում սարքավորման տեսակը, որը Դուք կարող եք խնդրել: Որևէ բան, որն օգնում է Ձեզ կատարել Ձեր աշխատանքը կարող է պատշաճ հարմարություն համարվել: Այն կարող է պարզ գործիք լինել, ինչպես օրինակ՝ մեկ ձեռքով աշխատող գրամեքենա այնպիսի անձնավորության համար, ով կարողանում է միայն մեկ ձեռքն օգտագործել կամ բարձր տեխնոլոգիաների սարք, ինչպես օրինակ՝ հաղորդակցման համար հատուկ արտադրված սարքավորումներ, որոնք խոսքի դժվարություններ ունեցող անձին հնարավորություն են տալիս հաղորդակցվել:

Սարքավորման տեսակների մասին Ձեզ գաղափար տալու համար Ձեր գործատուից կարող է ակնկալվել տրամադրել այն ADA-ի համաձայն. ահա այն օրինակների ցանկը, որոնք համաձայն Հավասար աշխատանքային հնարավորությունների խորհրդի (EEOC, Equal Employment Opportunities Commission) համարվում են պատշաճ հարմարություններ՝ ըստ «Տեխնիկական աջակցության ձեռնարկի պատշաճ հարմարության պարտավորության, III հոդվածի 3.10, 6 կետի (Technical Assistance Manual, The Reasonable Obligation, Section III, 3.10, 6): (<https://askjan.org/links/ADAtam1.html>):

- Խոլերի համար նախատեսված հեռահաղորդակցման սարքերը (TDDs, Telecommunication Devices for the Deaf) լսողության կամ խոսքի դժվարություն ունեցող անձանց հնարավորություն են ընձեռում հեռախոսի միջոցով հաղորդակցվել:
- Հեռախոսային ուժեղացուցիչ ներն օգտակար են լսողության դժվարություն անձանց համար:
- Սովորական համակարգիչ ների համար նախատեսված հատուկ ծրագրաշարերը և այլ սարքավորումները կարող են մեծացնել տպված նյութի չափը կամ տպված փաստաթղթերը խոսված բառերի վերածեն տեսողության և/կամ կարդալու դժվարություն ունեցող անձանց համար:
- Շոշափելի գծանշանն երը Բրայյան այբուբենի սարքավորման մեջ կամ խոշոր տպագրությունն օգտակար են տեսողության դժվարություն ունեցող անձանց համար:
- Հեռախոսի ականջակալները և լույսի հարմարեցված փոխարկիչները կարող են օգտագործվել ուղեղային կաթված կամ ձեռքի այլ դժվարություններ ունեցող անձանց կողմից:
- Խոսող հաշվիչները կարող են օգտագործվել տեսողության կամ կարդալու դժվարություն ունեցող անձանց կողմից: Բարձրախոսով հեռախոսները կարող են արդյունավետ լինել այն անձանց համար, ովքեր անդամահատված են կամ շարժման այլ դժվարություններ ունեն: Հետևյալ ցանկում ցուցադրված են աջակցող սարքերի լրացուցիչ օրինակներ և դրանց արժեքները.
- Ցուցիչի լույսով ժամաչափ, որը հնարավորություն է ընձեռում լսելու դժվարություն ունեցող բժշկական ծառայության մասնագետ տեխնիկին լաբորատոր ստուգումներ կատարել՝ արժեքը 27,00 ԱՄՆ դոլար:
- Ձեռքերի սահմանափակ օգտագործմամբ գրասենյակային ծառայողին «պտտվող կանգնակով» (“lazy susan”) ֆայլի բռնակ էր

տրամադրվել, որը նրան հնարավորություն էր տալիս հասնել իր աշխատանքի համար անհրաժեշտ բոլոր ֆայլերին՝ արժեքը 85,00 ԱՄՆ դոլար:

- Բացօթյա տարածքի պատասխանատուին, ով մեկ ձեռքը սահմանափակ է օգտագործում, փոցխի համար առանձնացված երկարաց վող ձեռք է տրվել: Սա նրան հնարավորություն էր տալիս վնասված ձեռքով ամուր բռնել երկարացման բռնակը և գործող ձեռքով վերահսկել փոցխը՝ արժեքը 20,00 ԱՄՆ դոլար:
- Հեռախոսային ուժեղացուցիչը, որը նախատեսված է լսողական սարքի հետ աշխատելու համար, գործարանի բանվորին հնարավորություն ընձեռեց մնալ իր աշխատանքին և խուսափել ավելի քիչ վճարվող աշխատանքի փոխադրվելուց՝ արժեքը 24,00 ԱՄՆ դոլար:
- Ընդունարանի կույր աշխատակցին լուսային զնա ձող տրամադրվեց, որը նրան թույլ էր տալիս որոշել, թե բաշխատախտակի որ գծերն էին զանգում, սպասում կամ օգտագործվում: Լույսի զննածողը ձայնային ազդանշան է տալիս, երբ պահվում է լուսավորման աղբյուրին մոտ՝ արժեքը 50,00 - 100,00 ԱՄՆ դոլար:
- Միայն մեկ ձեռքն օգտագործող անձը, ով աշխատում էր սննդի ծառայության ոլորտում, կարողանում էր կատարել բոլոր աշխատանքերը, բացի պահածոյի տուփերը բացելը: Նրան տրամադրվեց մեկ ձեռքով աշխատող պահածոներ բացելու գործիք՝ արժեքը 35,00 ԱՄՆ դոլար:
- Դառուկի համախտանիշով և սրտի բնածին խնդրով աշխատակցի համար հատակը սրբելու թեթև հարմարան ավելի փոքր ավելի հնարավորություն տվեց նրան իր աշխատանքը նվազագույն լարմամբ կատարել՝ արժեքը 40 ԱՄՆ դոլարից պակաս:
- Դաստակային խողովակի համախտանիշ ունեցող բեռնատարի վարորդը իր դժվարության պատճառով դաստակի շարժման սահմանափակում ուներ և որը նրան չափազանց անհարմարություն էր պատճառում ցուրտ եղանակին: Ձեռքի հատուկ, որն օգտագործվում է ջրասուզորդ համար նախատեսված ձեռնոցի հետ, նրան հնարավորություն ընձեռեց վարել ևույնիսկ ծայրահեղ եղանակային պայմաններում՝ արժեքը 55,00 ԱՄՆ դոլար:
- Հեռախոսի ականջակալները ուղեղային կաթված ունեցող ապահովագրական ոլորտի աշխատակցին հնարավորություն էին

տալիս գրել, երբ հաճախորդների հետ խոսում էր՝ վարձակալման արժեքը ամսական 6,00 ԱՄՆ դոլար:

- Պարզ ստվարաթուղթը, որը կոչվում էր «կադապար» (“jig”), մտավոր դժվարություններով անձին, ով մանրածախ խանութում էր աշխատում, հնարավորություն էր տալիս պատշաճ կերպով ծախել ջինսե տաբատները՝ արժեքը 0 ԱՄՆ դոլար:

6. Ի՞նչ պետք է անեմ՝ ճիշտ աջակցող սարք ձեռք բերելու համար:

Գործընթացն սկսվում է Ձեր գործատուին տեղեկացնելով, որ Դուք հաշմանդամություն ունեք և աջակցող տեխնոլոգիայի կարիք ունեք՝ Ձեր աշխատանքը կատարելու համար: Այնուհետև, Դուք պետք է հանդիպում խնդրեք՝ Ձեր առանձնահատուկ կարիքները քննարկելու համար: Եթե Դուք կամ Ձեր գործատուն բավարար գիտելիքներ ունեք աջակցող տեխնոլոգիայի մասին, Դուք կարող եք համաձայնել այն ամենի շուրջ, ինչը բավարարում է Ձեր կարիքները: Դուք պետք է փաստաթղթերով հաստատեք Ձեր քննարկման բովանդակությունը և Ձեր համաձայնության պայմանները:

Ձեր գործատուից չի պահանջվում գնել ամենաթանկ կամ ամենավերջին տեխնոլոգիայի սարքավորումը: Իրականում, Ձեր գործատուն ստիպված չէ ինչ-որ բան գնել, եթե Ձեր կարիքները կարող են այլ ձևով բավարարվել: Ձեր գործատուն չի կարող պատճառաբանել ապրանքի արժեքը և ոչինչ չանել, եթե չկան այլընտրանքներ և եթե գործատուն չի կարող ցույց տալ, որ ծախսը անհարկի դժվարություն կլինի: Փոխարենը, երբ որևէ ընտրանք բացառվի, գործատուն պետք է ի նկատի ունենա մնացած պատշաճ այլընտրանքները: Եթե ոչ մի պատշաճ ընտրություն չկա, քանի որ, օրինակ բոլոր սարքերը շատ թանկ են, Ձեզ պետք է հնարավորություն տրվի՝ այն անձամբ տրամադրելու:

7. Իմ գործատուն կարո՞ղ է պահանջել իմ բժշկից նամակ բերել առ այն, թե ինչ տեսակ աջակցող տեխնոլոգիա կարիք ունեմ:

Ոչ: Շատ դեպքերում, բժիշկը համապատասխան գիտելիքներ չունի՝ աջակցող տեխնոլոգիա առաջակցելու համար: Եթե Դուք բավարար տեղեկություններ չունեք կամ չեք կարողանում համաձայնության գալ միևնույն սարքի շուրջ, Ձեր գործատուն պետք է գնահատում խնդրի գնահատողից, ով կարող է արդյունավետ ընտրանք առաջարկել: Տե՛ս

29 C.F.R. § 1630.9-ի հավելվածը՝ «Չամասպատասխան պատշաճ հարմարությունների սահմանման գործընթացը» (*Process of Determining the Appropriate Reasonable Accommodation*):

Կան մասնագետներ, ովքեր գնահատում են աջակցող տեխնոլոգիայի կարիքները: Այս մասնագետներից ոմանք աշխատում են հիվանդանոցների վերականգնողական բաժանմունքներում: Այլ մասնագետներ հնարավոր է գտնել հաշմանդամության հարցերով զբաղվող կազմակերպություններում: Կան նաև դիմացկուն վաճառողներ, ովքեր աջակցող տեխնոլոգիայի գնահատում են անցկացնում: Վերականգնողական վարչության (DOR, Department of Rehabilitation) խորհրդատուն, որն անկախ ապրելակերպի կենտրոնի մասնագետ է կամ զբաղվում է գործի կառավարմամբ տարածքային կենտրոնում, պետք է կարողանա Ձեզ ուղղորդել այդպիսի մասնագետի մոտ: Գնահատման արդյունքում պետք է պարզվի, թե ինչ աջակցող տեխնոլոգիայի կարիք ունեք:

8. Իմ գործատուն ի՞նչ տեղեկություններ կարող է ստանալ իմ բժշկից:

Ձեր գործատուն իրավունք ունի տեղյակ լինել միայն ֆիզիկական և մտավոր սահմանափակումների մասին, որոնք Դուք ունեք Ձեր հաշմանդամության պատճառով: Բժշկի ծանուցման մեջ պետք է նկարագրվի հաշմանդամությունը և այն, թե ինչ տեղի կունենա, եթե այն ազդի Ձեր աշխատանքի հիմնական գործառնությունները կատարելու վրա: Ձեր բժիշկը չպետք է այլ բժշկական կամ հոգեբանական տեղեկություններ տրամադրի, որոնք տեղին չեն: Եթե Դուք կարող եք այս տեղեկատվությունը տրամադրել մեկ այլ հավաստի փաստաթղթի միջոցով, կարիք չկա, որ Ձեր բժիշկը ներգրավվի:

9. Ի՞նչ կարող եմ անել, եթե իմ գործատուն մերժում է աջակցող տեխնոլոգիայի համար արված իմ խնդրանքը:

Դուք կարող եք գործակալության միջոցով բողոք ներկայացնել և հայցով դիմել դատարան: Շատ դեպքերում Դուք պետք է նախ բողոք ներկայացնեք՝ նախքան դատարան դիմելը: Չավելյալ տեղեկությունների համար տե՛ս մեր հրապարակումը՝ «Աշխատանքային իրավունքներ՝ հաշմանդամ ամերիկացիների մասին օրենքի համաձայն» (*Employment*

Rights under the Americans with Disabilities Act), որը մատչելի է
<http://www.disabilityrightsca.org/pubs/PublicationsEmployment.htm>:

10. Ֆինանսավորման այլ աղբյուրներ կա՞ն, որոնք ինձ հնարավորություն կընձեռեն իմ սեփական աջակցող տեխնոլոգիան ձեռք բերելու համար:

Այո: Ինքնաաջակցման հասնելու (PASS, Plan to Achieve Self-Support) ծրագիրը Ձեզ հնարավորություն կընձեռի սոցիալական ապահովության (Social Security) նպաստներ ձեռք բերել՝ աջակցող տեխնոլոգիայի սարքի համար խնայելու նպատակով: Վերականգնման վարչությունը նույնպես կարող է աջակցող տեխնոլոգիայի համար ֆինանսավորում տրամադրել: Հավելյալ տեղեկությունների համար խնդրում ենք նայել այս նյութերին՝ վերաբերող մեր հրապարակումները՝

<http://www.disabilityrightsca.org/pubs/PublicationsAssistiveTechnology.htm>

և
<http://www.disabilityrightsca.org/pubs/PublicationsClientAssistanceProgram.htm>

Disability Rights California-ն ֆինանսավորվում է տարբեր աղբյուրներից, հովանավորների ամբողջական ցանկի համար այցելե՛ք՝

[http://www.disabilityrightsca.org/
Documents/ListofGrantsAndContracts.html](http://www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html).